

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԴՅՈՒՆԸ 40 ՏԱՐՈՒՄ» (հանձնարարական բիր-
տոգրաֆիա), խմբագրությունը և առաջաբանը Վ. Դարյանի, Հայկական ՍՍՌ
Ալ. Մյասնիկյանի անվան Պետական ուսուցիչական գրադարանի հրատարա-
կություն, 1962, տպաքանակը 1000 օրինակ, 185 էջ, գինը 20 կ.:

ԱՐԱՄՅԱՆ Ա. — «Ժամանակակից հայերենի ձայնավորները» (փորձառական ուսումնասիրու-
թյուն), Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1962, տպաքանակը 1200
օրինակ, 136 էջ, գինը 76 կ.:

Ներկա աշխատությունը հայերենի ձայնավորների համակարգի փորձառական հնչյունաբա-
նական ուսումնասիրության առաջին փորձն է, որտեղ քննության են առնված զրական հայերե-
նի վեց ձայնավորները:

Հետադոտության ընթացքում հեղինակը կիրառել է ուսումնասիրության կոմպլիքս մեթոդը:

ԲԱՐԱՅԱՆ Ա. — «Պերն Պոռչյան», Հայպետհրատ, 1962, տպաքանակը 3000 օրինակ, 332 էջ,
գինը 73 կ.:

Ներկա մեկնագրությունը նվիրված է XIX դարի երկրորդ կեսի հայ նշանավոր գրող Պերն
Պոռչյանի կյանքին ու զրական-հասարակական գործունեությանը: Հայ ժողովրդի անցյալի պատ-
մական-հասարակական ֆոնի վրա ընթացող զրական գործունեությանը և ստեղծագործական ուղին, հան-
դամանորեն վերլուծված են նրա վեպերը («Սոս» և «Վարդիթեր», «Հացի խնդիր», «Ցեցեր»,
«Բղղե», «Հունոն», «Կովածաղիկ», «Շահեն»), մի շարք փոքրածավալ գործեր ու որոշ ձեռագիր
նյութեր:

ԲԱԳԼՅԱՆ Խ. — «Գերմանա-քուրմական օկուպանտները Հայաստանում 1918 թվականին»,
Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն, 1962, տպաքանակը
4000 օրինակ, 289 էջ, գինը 1 ո.:

Ընթերցող հասարակության ուշադրությանը ներկայացվող ներկա աշխատասիրությունը լույս
է սփռում 1918 թ. Հայաստանում գերմանա-թուրքական օկուպանտների կատարած ավերածու-
թյունների, թալանի և կողոպուտի, ինչպես նաև այդ գործին ամերիկա-անգլիական իմպերիա-
լիստների, անգրկովկասյան կոնտր-ռևոլյուցիոն բյուրի, դաշնակցականների անմիջական մասնակ-
ցության պատմության վրա:

ՈՒՀԱԿՅԱՆ Պ. — «Կոնֆլիկտը Շիրվանզաղեի «Փառս» վեպում», Հայպետհրատ, 1962, տպա-
քանակը 3000 օրինակ, 133 էջ, գինը 40 կ.:

Հեղինակը ներկա ուսումնասիրության մեջ հանգամանորեն քննության է առել մեծանուն
վիպասան-դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզաղեի «Փառս» վեպի առանցքային հարցերը, վիպա-
կան կերպարների ստեղծման մեթոդներն ու եղանակները, ինչպես նաև վեպի գեղարվեստա-
կան այլ առանձնահատկությունները:

Աշխատասիրության հեղինակի նպատակն է եղել վերլուծել Շիրվանզաղեի գլուխ-գործոց
վեպը կոնֆլիկտի տեսանկյունից:

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

«ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», հատոր 2-րդ, Հայկական ՍՍՌԻ ԳԱ հրատարակչություն, 1962, տպաքանակը 3000 օրինակ, 513 էջ, գինը 1 ո. 53 կ.:

Մեր նոր գրականության պատմության ներկա հատորը կուեկտիվ աշխատանքի արդյունք է. այն տպագրության է պատրաստել Հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը:

Հատորը բացվում է Գ. Ստեփանյանի ընդարձակ ներածականով, որտեղ բացահայտված է XIX դարի 50—60-ական թվականների հայ հասարակական կյանքի, կուլտուրայի ու գրականության ընդհանուր պատկերը:

Գրքի առաջին գլուխը նվիրված է այդ շրջանի հրապարակաստությունն ու քննադատությունը (Ստեփանոս Նազարյան, Ստեփան Ոսկանյան, Հարություն Սվաճյան և Գրիգոր Զիլինկիրյան): Հատորի հետագա գլուխներում տեղ են գտել տարբեր մասնագետ-գրականագետների վրչին պատկանող մենագրությունները՝ նվիրված Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Սմբատ Շահազիզի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Պետրոս Դուրյանի ու այդ շրջանում գործող այլ բանաստեղծների ու արձակագիրների կյանքին ու գրական-հասարակական գործունեությանը:

Գրքի վերջին իններորդ գլուխը նվիրված է 50—60-ական թվականների դրամատուրգիային:

Հատորյակի վերջում ղետեղված է «Ժամանակագրությունը» և անվանացանկը:

«Հայ նոր գրականության պատմության» II հատորի խմբագրական կոլեգիայի անդամներն են՝ Ասատրյան Ա. Ա., Ինճիկյան Ա. Մ., Հովնան Գ. Ն., Զրբաշյան էդ. Մ., Սարգսյան Խ. Ս., Սարիսյան Ս. Ն.:

«ՆԱՎԹ ՆՎ ԱՐՅՈՒՆ».—Բհյրութի (Լիրանան) Ալ-Բայան հրատարակչությունը 1962 թ. արաբերեն լեզվով լույս է ընծայել «Նավթ և Արյուն» խորագրով, ՀՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի ավագ գիտ-աշխատակից Հ. Քրյանի (Քուրյանց) «Պայքար նավթի համար» (նավթաբուրյունների տնտեսաշխուհի և անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակասությունները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում) գիրքը: Այս գիրքը հայերեն լեզվով Երևանում հրատարակվել է 1957 թ. ՀՍՍՌԻ ԳԱ Պատմության ինստիտուտի կողմից: Հայերենից արաբերենի թարգմանել են արաբ պրոգրեսիվ գրող և ժուռնալիստ Արզել Ղանի հատիը էլ Կիֆան և լեզվարան Ժորժ Քազրազյանը: Գրքի առաջաբանում Արզել Ղանի գրում է. «...Այս փորձով գուցե կատարած կլինեմ իմ պարտքի մի մասը արաբական հայրենիքի և գրականության հանդեպ: Որովհետև, այս գիրքը պարունակում է նավթի քաղաքականության մասին այնպիսի ճշմարտություններ, որոնք բացակայում են ուրիշ գրքերում: Այս հարցերի շուրջ գրված ուրիշ գրքեր գիտումնավոր կերպով ընթերցողի ուշադրությունը շեղում են իսկական ողբերգությունից: Ի տարբերություն դրանց, այս գրքում հեղինակը ներկայացնում է կապիտալիստների շահագործումը այնպես, ինչպես որ կա...»:

Հայկական ՍՍՌԻ ԳԱ հասարակական գիտությունների գծով հրատարակած այս գիրքն առաջինն է, որը թարգմանվել է արաբերենի: